ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 24 » օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-38/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ ներկայացված «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00441458) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 17.08.2015թ. թիվ ԴՎԱ/1956 գրության հիման վրա, 20.08.2015թ. N 1/73-1/22387-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության 17.08.2015թ. թիվ ԴՎԱ/1956 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնը 24.02.2016թ. թիվ 01/04.1/656-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 20.08.2015թ. N 1/73-1/22387-15 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով արձանագրել է «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից ***մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (07.07.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն կարող է ներառվել Ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է Նախարարությանը Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 07.09.2015թ. թիվ 01/04.1/2337-15 գրությամբ դիմել է «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին, սակայն պատասխան չի ստացվել:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 17.08.2015թ. թիվ ԴՎԱ/1956 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է, որ Պատվիրատուի՝ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը, ինչի հիման վրա հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Միաժամանակ Պատվիրատուն վերը նշված գրությանը կից՝ Նախարարությանն է տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-38/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ ներկայացված «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/55» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Թալգրիգ Գրուպ» ՍՊԸ-ն և «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն:

2. Նշված մասնակիցների կողմից ներկայացվել է 06.07.2015թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիր, որի 1.2.2 կետի համաձայն՝ «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն պարտավորվել է հայտով ներկայացնել «Մասնագիտական փորձառություն», «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշները:

3. «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն հայտի N 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.07.2015թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.3 կետով որոշում է կայացվել Ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Թալգրիգ Գրուպ» ՍՊԸ-ին (նաև «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին):

5. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 28.07.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն կոնսորցիումով մասնակցող «Թալգրիգ Գրուպ» ՍՊԸ-ի և «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 3.174.268.999 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 2.168.402.233 ՀՀ դրամ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.08.2015թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով որոշել է «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին գերազանցելու հիմքով:

8. Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.02.2016թ. թիվ 01/04.1/656-16 գրությամբ արձանագրել է «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել Նախարարությանը Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

9. Ի պատասխան Կենտրոնի 24.02.2016թ. թիվ 01/04.1/656-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ առաջարկել է նախաձեռնել «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

5. ՍՑ-ԳԲԽ-38/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.08.2015թ. N 1/73-1/22387-15 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությունը, Կենտրոնի 24.02.2016թ. թիվ 01/04.1/656-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: **Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.***

Կարգի 124-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին.

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և պահանջում նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:

«Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.3 հավելվածի ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» ենթակետով ***հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:***

Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն Ընկերության վերաբերյալ, որին ի պատասխան տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն ***(07.07.2015թ.)*** նախորդող հաշվետու տարվա ***(2014թ.)*** ընթացքում ***պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 3.174.268.999 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 2.168.402.233 ՀՀ դրամ:***

Այսինքն, Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Հետևաբար «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի N 3.3 հավելվածով ներկայացված ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» ենթակետը չի համապատասխանում իրականությանը և Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի տեսանկյունից հանդիսանում է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*
- Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

«Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Կենտրոնն արձանագրում է, որ «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ, մինչև ՍՑ-ԳԲԽ-38/16 եզրակացությունը բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (07.07.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.02.2016թ. թիվ 01/04.1/656-16 գրությամբ, արձանագրելով «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, խնդրել է Նախարարությանը Ընկերության անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված Ընկերության կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Մինչդեռ, ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, Կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով բողոքարկման գործընթաց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև սույն եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-38/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելն առկա չէ որևէ տեղեկատվություն «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 07.07.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 29.02.2016թ. թիվ 1/73-1/7375-16 գրությամբ ներկայացված «Կարդինալ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00441458) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-38/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան